ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՐՈԹԵԶԱՕՐԹՈՊԵԴԻԿ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *«ԱՍՀՆ-ՇՀՇՁԲ-17/2-Պ»*

ք. Երևան 27 մարտի.2017 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և *«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ*-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Բաբայանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է _____ (____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան _____ 20 թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ կատարելուց:

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն,

պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **26** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	"Պրոթեզաօրթոպեդիկ" ՍՊԸ
հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3	հասցեն՝ ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55ա
Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Բանկի անվանումը՝ "Հայէկոնոմբանկ' ԲԲԸ Արաբկիրի մասնաճյուղ
հ/հ 900011016723 հվհհ 01506515	հ/հ 163058000791 հվհհ 00851861
Աշխատանքի ղեկավար՝ Ա. Գրիգորյան	տնօրեն Գ. Բաբայան
Կ.Տ. (ստորագրություն)	Կ.Տ (ստորագրություն)

Հավելված 1
« 27 » մարտի 2017թ. կնքված
N «ԱՄՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-Պ» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում օրթեզների պատրաստման ծառայությունների

Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող օրթեզների պատրաստման ծառայությունները մատուցվում են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, իսկ ծառայությունների մատուցումը կարգավորվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի հունիսի 27-ի N 92-Ա/1 հրամանով սահմանված կարգով, ստորև բերված ցուցանիշներին համապատասխան:

Չափաբաժին	Անվանում	Ենթատեսակ	Տեխնիկական բնութագիր
3	Արմնկային օրթեզ հոդով, պլաստիկից	3.1 Արմնկային օրթեզ հոդով, պլաստիկից	Տեղադրվում է արմնկային հոդին՝ նախաբազկի ստորին 3-րդից մինչև բազկի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ արմնկային հոդում: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
		3.2 Արմունկ-ճաճանչ-դաստակային օրթեզ արմնկային հոդով, պլաստիկից	Տեղադրվում է դաստակին, ճաճանչ-դաստակային հոդին, արմնկային հոդին՝ մինչև բազկի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ արմնկային հոդում, ճաճանչ-դաստակային հոդն անշարժ է: Պատրաստվում է մետաղական շինաներով և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
5	Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, լամինացիայով (AFO)	5.1 Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, լամինացիայով	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև սրունքի միջին-վերին 3-րդը, լիովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունցիան՝** անշարժացնող, շտկող,
		5.2 Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի՝ ծնկոսկրի (պատելլայի) կրումով, լամինացիայով	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև ծնկան հոդը և հենվում է ծնկոսկրին: Պատրաստվում է պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, բեռնաթափող
9	Սրունք-թաթային օրթեզ հոդով, լամինացիայով (AFO)	-	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև սրունքի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ սրունք-թաթային հոդում: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունցիոնալ

	օրթեզ հոդով, լամինացիա-յով (KO)		շարժումներ ծնկան հոդում: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
12	Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, կաշվից	12.1 Ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան հոդով, կաշվից (KAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում, սրունք-թաթային հոդն անշարժ է: Պատրաստվում է մետաղական շինաներից և կաշվից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
		12.2 Ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան և սրունք-թաթային հոդերով, կաշվից (KAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան և սրունք-թաթային հոդերում: Պատրաստվում է մետաղական շինաներից և կաշվից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
		12.3 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան հոդով, կաշվից (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում: Պատրաստվում է մետաղական շինաներից և կաշվից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող
		12.4 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան և սրունք-թաթային հոդերով, կաշվից (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան և սրունք-թաթային հոդերում: Պատրաստվում է մետաղական շինաներից և կաշվից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող
		12.5 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային հոդով, կաշվից (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային հոդում: Պատրաստվում է մետաղական շինաներից և կաշվից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
		12.6 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային և ծնկան հոդերով, կաշվից (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային և ծնկան հոդերում: Պատրաստվում է մետաղական շինաներից և կաշվից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
		12.7 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային ծնկան և սրունք-թաթային հոդերով, կաշվից (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային, ծնկան և սրունք-թաթային հոդերում: Պատրաստվում է մետաղական շինաներից և կաշվից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ

	գոտկա-սրբանային օրթեզ՝ սեղմիրան (TLSO)		սրբանային հատվածներում, ստորին հատվածում հենվում է զստոսկրերի թևերին՝ լիովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: Ներսի կողմից պատված է փափուկ ներդիրով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, բեռնաթափող
25	Գոտկա-սրբանային օրթեզ՝ սեղմիրան (LSO)	-	Տեղադրվում է ողնաշարի գոտկային և սրբանային հատվածներում, ստորին հատվածում հենվում է զստոսկրերի թևերին՝ լիովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: Ներսի կողմից պատված է փափուկ ներդիրով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, բեռնաթափող

1-26 չափաբաժինների օրթեզներին ներկայացվող այլ պահանջներ.

1. **Ստանդարտ.** օրթեզները պետք է պատրաստվեն միջազգային՝ ISO ստանդարտներին համապատասխանող նյութերով և տեխնոլոգիաներով, ապահովեն համապատասխան ամրություն, լինեն թեթև, կրելու համար հարմար, կոսմետիկ առումով գեղեցիկ, հեշտ ենթարկվեն սանիտարական մշակման:
2. **Օրթեզների պատրաստման նյութեր.** օրթեզները պատրաստվում են կաշվե-մետաղական շինաներով, պլաստիկ արհեստական նյութերից, տեքստիլ և համակցված (բարձր ջերմաստիճանային և ցածր ջերմաստիճանային թերմոպլաստներ՝ պոլիպրոպիլեն և պոլիէթիլեն, նյութեր լամինացիայի համար, ածխապլաստիկ նյութեր և այլն): Հոդերը պատրաստվում են մետաղից (ալյումին, տիտան, երկաթ), պլաստիկից, կոմբինացված (պլաստիկ-մետաղ), կարբոնային և այլն: Օրթեզները պետք է պատրաստվեն հիպոալերգիկ նյութերից, բացառեն ճնշումը չթույլատրվող հատվածների վրա (ավշային հանգույցներ, կրծքագեղձեր, ոսկրային դուրս ցցված հատվածներ, մակերեսային անոթներ, նյարդեր):
3. **Օրթեզների պատրաստում և տրամադրում.** օրթեզները պետք է պատրաստվեն անհատապես, անձին տրամադրվեն շահագործման, պահպանման, խնամքի ձևերը մանրամասն բացատրելուց (գրավոր տրամադրում է հուշաթերթիկ) և փորձարկումից հետո: Օրթեզավորման ժամկետը նախատեսվում է 5-10 օր: Այդ ընթացքում հաշմանդամություն ունեցող անձը առնվազն 2 անգամ ներկայանում է կազմակերպություն՝ չափափորձարկման: Օրթեզները պետք է լինեն չօգտագործված, պատրաստված լինեն ամբողջությամբ նոր նյութերից: Գույնը ըստ հաշմանդամություն ունեցող անձի ցանկության: Օրթեզների կառուցվածքային բնութագրերը պետք է համապատասխանեն հիվանդության բնույթին, ծառայեն համապատասխան խնդիրների վերացմանը, չպետք է խորացնեն առկա ախտաբանական խնդիրները:
4. **Երաշխիքային ժամկետը.** շահագործման ամբողջ ժամանակահատվածը, որի ընթացքում պահանջվող վերանորոգումներն իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝

1. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար վարել անձնական գործ (ներառյալ՝ հեռախոսահամար)
2. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը.
3. Մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատուցումը, մասնավորապես, օրթեզների պատրաստման համար չափագրումներն ու չափափորձարկումները կազմակերպել արտագնա այցելությունների միջոցով՝ սահմանամերձ մարզերում առնվազն 2 ամիսը մեկ անգամ, իսկ մյուս մարզերում՝ ըստ անհրաժեշտության:

4. Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում կազմակերպությունները պարտավոր է իրենց դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց ներկայացնել տեղեկություն այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ ***պատվիրատուից ստացած ձևաչափով:***
5. Ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ.

6) համապատասխան և մատչելի շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու, արտադրության գործընթացը կազմակերպելու համար.

6. Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը:

Տեղական և ԱՊՀ երկրներում թողարկվող նյութերով կամ համարժեք նյութերով և հայրենական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների

Ստորև բերված տեխնիկական բնութագրերը կիրառվում են ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում՝ տեղական և ԱՊՀ երկրներում թողարկվող կամ համարժեք նյութերով և հայրենական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և դրանց վերանորոգման ծառայությունների չափաբաժինների նկատմամբ:

Տեղական և ԱՊՀ երկրներում թողարկվող կամ համարժեք նյութերով և հայրենական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և դրանց վերանորոգման հետ առնչվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ, իսկ ծառայությունների մատուցումը իրականացվում է համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի հունիսի 27-ի N 92-Ա/1 հրամանով հաստատված կարգի:

Որոշման համաձայն պարագա ստանալու իրավունք ունեցող անձանց /այսուհետ՝ շահառու/ տրամադրվում են՝

Օրթոպեդիկ կոշիկներ /Չափաբաժին 28/	
Չափաբաժնի տեխնիկական բնութագրեր, առանձնահատկություններ և այլ պայմաններ	
Պատրաստման նյութեր և տեխնոլոգիա	Միջազգային ստանդարտներին համապատասխան տեխնոլոգիայով և նյութերով
Պարագայի պատրաստման և տրամադրման պայմանները	1. Պատրաստման և տրամադրման առավելագույն ժամկետը 21 օր, որի ընթացքում կատարվում են անհրաժեշտ քանակի չափափորձարկումներ՝մինչ պարագայի վերջնական տրամադրումը շահառուին: Պատրաստման ժամկետը կարող է երկարաձգվել շահառուի մեղքով, եթե նա սահմանված ժամկետում չի ներկայանում չափափորձարկման: 2. Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատապես, կատարելով համապատասխան չափագրումներ՝հաշվի առնելով ոտնաթաթի դեֆորմացիայի բնույթը, ուղեկցող հիվանդությունների և վերքերի առկայությունը, բժշկի կողմից նշանակված կոշիկի կրման նպատակը, դեֆորմացիայի շտկման հատվածը և չափը: 3. Յուրաքանչյուր տարի տրամադրվում է երկու զույգ օրթոպեդիկ կոշիկ՝ մեկ զույգն առանց տաքացված տակդիրների, իսկ մյուս զույգը՝ կիսաճիտք կամ երկարաճիտք: Օրթոպեդիկ կոշիկներն անձին կարող են տրամադրվել երկու զույգը միաժամանակ: 4. Շահառուին սովորեցվում է պարագայից օգտվելու ձևը և տրամադրվում է գրավոր տեղեկատվություն-հուշաթերթիկ դրա հիմնական տեխ.բնութագրերի, երաշխիքային սպասարկման, պահպանման ու օգտագործման կանոնների, հերթական տրամադրման ժամկետի վերաբերյալ: 5. Շահառուին է հանձնվում վերջնական փորձարկումից և նրա համաձայնությունից հետո:
Չափաբաժիններին ներկայացվող պահանջները	Տեսականին ընդգրկում է մոդայիկ մոդելներ՝ • Առանց տաքացված տակդիրների՝ ա) մեծահասակների յուրաքանչյուր սեռի համար առնվազն 2 մոդելային տարբերակ և 3 գույն բ) երեխաների յուրաքանչյուր սեռի համար՝առնվազն 3 մոդելային տարբերակ և 3 գույն: • Կիսաճիտք կամ երկարաճիտք՝ ա) մեծահասակների յուրաքանչյուր սեռի համար առնվազն 2 մոդելային տարբերակ և 3 գույն բ) երեխաների յուրաքանչյուր սեռի համար՝առնվազն 3 մոդելային տարբերակ և 3 գույն: Պետք է բավարարի շահառուի պահանջներին՝ ➢ անթրոպոմետրիկ տվյալներով ➢ բժշկական ցուցումով ➢ թեթևությամբ

	➢ դիմացկունությամբ և ամրությամբ ➢ ֆունկցիոնալությամբ ➢ հարմարությամբ ➢ էսթետիկ տվյալներով Բարդ դեֆորմացիաների դեպքում մոդելի ընտրությունը կատարում է կազմակերպության մասնագետը:
Վիճակը	Չօգտագործված, ամբողջությամբ նոր նյութերից պատրաստված
Երաշխիքային ժամկետ	Մեկ տարի, որի ընթացքում պահանջվող վերանորոգումները, որակի հետ կապված խնդիրների վերացումը (ընդհուպ նորով փոխարինումը) իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին, եթե թերությունը չի առաջացել շահառուի մեղավորությամբ:
Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը պետք է բավարարեն շահառուի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին՝ հաշվի առնելով նրա հիմնական և ուղեկցող հիվանդությունների բնույթը:
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	
Օրթոպեդիկ կոշիկ Չափաբաժին 28	Պատրաստվում է անհատապես՝բնական կաշվե հումքից և այլ օժանդակ նյութերից, դրվում է երկաթե սուպինատոր, ամառային կոշիկների տակդիրը՝ կոշտ կաշվից, ձմեռային կոշիկների տակացուն՝ միկրոպորից /ռետինե նյութ/, միջատակը /ստելկան/ կոշտ կաշվից /պոլի/: Ելնելով դեֆորմացիայի բնույթից կարող են տեղադրվել երկայնական և լայնական սուպինատորներ, վալգիզացնող, վարիզացնող կամ այլ շտկող հարմարանքներ:
Չափաբաժին 29	**Բաշմակ (ոտնաման)**
1. Ստանդարտը	Տեղական և ԱՊՀ երկրների տեխնոլոգիայով արտադրվող կաշվե հումքից և այլ օժանդակ նյութերից
2. Տեխնիկական ցուցանիշները	Պետք է բավարարենշահառուի պահանջներին՝ չափսով, ամրությամբ: Պատրաստվում է փափուկ կաշվից միջատակը /ստելկան/ կոշտ կաշվից /պոլի/, դրվում է խցան ոտնաթաթի անդամահատված մասի չափով: Օգտագործվում է նաև սպունգ խցանի հետ շփումը թուլացնելու նպատակով: Լեզվակը երկար, չքրտնացնող կաշվից:Երկարաճիտք և ամրակապերով:
3. Անվտանգությունը	Հումքը պետք է բավարարի օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին
4. Գնման պայմանները	Պատրաստման ժամկետը՝ 15-30 օր
5. Փաթեթավորումը	Պոլիէթիլենային տոպրակներով

6.Պարագայի տրամադրումը	Պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
7. Օրթոպեդիկ կոշիկ	Ոտնաման (բաշմակ) շահառուին հարմար

Չափաբաժնին 56	**Սեղմիրան/կորսետ(փափուկ)**
56 չափաբաժնին ներկայացվող ընդհանուր պահանջները	
1. Ստանդարտ	Փափուկ նյութերից, կաշի, կտոր
2. Տեխնիկական ցուցանիշները	Բամբակյա կտորից, ճկուն մետաղալարով, կողքերը՝ էլաստիկ երիզներով, ետին մասում ամրաթելերով, աստառը՝ կաշվից
3. Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը չիրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին:
4. Գնման պայմանները	Պատրաստման համար սահմանվում է 5-10օր, որի ընթացքում կատարվում է չափափորձարկում
5.Պարագայի տրամադրումը	Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
6.Սեղմիրան /փափուկ/ ԿՌՕ-14Լ	Մեջքի ուղղման և ճողվածքը ձգող կտորից հարմարանք

Աղեկապ/բանդաժ/, ռեկլինատոր, ծնկակալ

57-63 չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջները	
1. Ստանդարտ	Կոշտ և փափուկ նյութերից, պոլիմեր, կաշի, կտոր:
2. Տեխնիկական ցուցանիշները	Բամբակյա կտորից, ճկուն մետաղալարով, կողքերը՝ էլաստիկ

3. Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը չիրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին
4. Գնման պայմանները	Պատրաստման համար սահմանվում է 5-10օր, որի ընթացքում կատարվում է չափափորձարկում
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
Չափաբաժին 57 Աղեկապ ԲՆ 1-01	Միակողմանի աճուկային ճողվածքի համար
Չափաբաժին 58 Աղեկապ ԲՆ1-05	Երկկողմանի աճուկային ճողվածքի համար
Չափաբաժին 59 Աղեկապեր՝ ԲՆ3-08, ԲՆ3-09, ԲՆ3-02, որովայնի ճողվածքի համար	Գների տարբերությունը պայմանավորված է պատվիրատուի չափսերից ելնելով
Չափաբաժին 60 Աղեկապեր՝ ԲՆ3-09 որովայնի ճողվածքի համար	Գների տարբերությունը պայմանավորված է պատվիրատուի չափսերից ելնելով
Չափաբաժին 62 Ռեկլինատոր ԿՌ1-01	Ռեկլինատոր՝ ուսերի, թիակների կորությունն ուղղելու, ֆիքսելու համար համար
Չափաբաժին 63 Ծնկակալ ՊՆ0-03	Ծնկահոդի ֆիքսման համար

Չափաբաժին 64 **Սուպինատոր/ներդիր**

64 չափաբաժնին ներկայացվող ընդհանուր պահանջները	
1. Ստանդարտ	Կոշտ և փափուկ կաշիներից, տեպեֆորմից /սպունգ/, խցանի և ռետինե ներդիրներով
2. Տեխնիկական ցուցանիշները	Կոշտ և փափուկ կաշվից, խցանե կամ ռետինե ներդիրներով
3. Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը լինեն չիրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկև ֆիզիկական պահանջներին

4. Գնման պայմանները	Պատրաստման համար սահմանվում է 5-10օր, որի ընթացքում կատարվում է չափափորձարկում
5.Պարագայի տրամադրումը	Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
6.Օրթոպեդիկ սուպինատոր	Հարթաթաթություն և ոտքերի անհավասարությունն ուղղող, պատրաստվում է կոշտ կաշվից և տեպեֆորմից, պատվում է փափուկ կաշվով և խցանե ներդիր, անհատական չափսերով

Հենակներ, ձեռնափայտ

65-67 չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջները	
1. Ստանդարտ	Պատրաստման համար հիմնականում օգտագործվում են ալյումինե խողովակներ, ՊՎԽ, ներկեր, պոլիամիդ, պոլիպրոպիլեն
2. Տեխնիկական ցուցանիշները	Պետք է լինեն թեթև, չճկվող, դիմացկուն և հարմար
3. Գնման պայմանները	շահառուին պահանջներին և հասակին համապատասխան,
4. Պարագայի տրամադրումը	Պատրաստվում և հանձնվում է շահառուին:Կարող է տրամադրվել նաև լուսանկարում պատկերված պարագայի /արմնկային հենակ, թևատակի հենակ, ձեռնափայտ/ այլ տարատեսակներ, որոնք համապատասխանում են ներկայացված բոլոր տեխնիկական բնութագրերին: Երեխաներին կարող է տրամադրվել գունավոր հենակներ և ձեռնափայտեր:

Չափաբաժին 65 Հենակ թևատակի	Պատրաստված է թեթև ալյումինե ձուլվածքից,ռետինե ծայրատով: Բռնակը հարթ մակերեսով, բարձրությունը կարգավորվող /թևատակից մինչև դաստակ և ընդհանուր բարձրությունը,բարձրության կարգավորման դիրքերի քանակը թևատակից մինչև դաստակ-5հատ, յուրաքանչյուր դիրքի միջև եղած տարածությունը- 31մմ,ընդանուր բարձրության դիրքերի քանակը-9 հատ,յուրաքանչյուր դիրքի միջև եղած տարածությունը-16մմ/: Չափսերը կարգավորվող: Լուսանկարը՝ 
Չափաբաժին 66 Հենակ արմնկային	Պատրաստված է թեթև ալյումինե ձուլվածքից, ռետինե ծայրատով: Բռնակը հարթ մակերեսով: Նախաբազուկը գրկող բռնակը շարժուն, պատրաստված պլաստմասսից: Բարձրությունը կարգավորվող /նախաբազուկից մինչև դաստակ և ընդհանուր բարձրությունը, բարձրության կարգավորման դիրքերի քանակը նախաբազուկից մինչև դաստակ-4 հատ, յուրաքանչյուր դիրքի միջև եղած տարածությունը- 17մմ, ընդանուր բարձրության դիրքերի քանակը-10հատ, յուրաքանչյուր դիրքի միջև եղած տարածությունը-17մմ/: Չափսերը՝ կարգավորվող: Լուսանկարը՝
Չափաբաժին 67 Ձեռնափայտ	Պատրաստված է թեթև ալյումինե ձուլվածքից,ռետինե ծայրատով: Բռնակը պլաստմասից: Բարձրությունը կարգավորվող /բարձրության կարգավորման դիրքերի քանակը -10 հատ,յուրաքանչյուր դիրքի տարածությունը- 17մմ/: Չափսերը կարգավորվող: Լուսանկարներ՝



Քայլակներ

68 և 69 չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջները	
1. Ստանդարտ	Պատրաստվում էալյումինե թեթև խողովակներից և ռեզինե բռնակներից
2. Տեխնիկական ցուցանիշները	Պետք է լինի թեթև, ամուր, դիմացկուն, շահառուի չափերին համապատասխան, բարձրությունը կարգավորվող: Շահառուի առողջության առանձնահատկություններից ելնելով տրամադրվում է քայլակ առջևի 2 անիվներով՝ յուրաքանչյուրը 5 դույմ բարձրությամբ: Շահառուի ցանկությամբ կարող է տրամադրվել ծալովի քայլակ:
3. Անվտանգությունը	Շահառուին օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը լինեն չհրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին
4.Պարագայի տրամադրումը	Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և հանձնվում շահառուին
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
Չափաբաժին 68 Քայլակ սովորական	Քայլակ՝ շահառուին հարմար, Լուսանկարներ՝

Չափաբաժին 69 Մանկական քայլակ /Մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների համար/	Քայլակն ունի ամուր և ծալովի կառուցվածք և կառավարվող բարձրություն: Առաջարկում ենք նաև ներկրել տվյալ քայլակի ավելի մեծ չափսը, որի տվյալներ նույնպես ներկայացված են: Առանձնահատկություններ՝ • Նախատեսված է 90-170 սմ հասակ ունեցող շահառուների համար / • Հավաքվող /ծալվող/ կառուցվածք • Ունի ապահովման գոտիներ • Դիմացի անիվներն աշխատում են շրջադարձ կատարող մեխանիզմներով: Դիմացի անիվները կարող են նաև ֆիքսվել՝ սահմանափակվելով շարժումները միայն ետ և առաջ: • Հետևի անիվներն ունեն արգելակման հնարավորություն և շարժվում են միայն ետ կամ առաջ: • *Ամբողջությամբ ալյումինե կառուցվածք: Տեխնիկական բնութագիր այլ մանրամասներ՝ բարձրությունը - 47-78 սմ *քայլակի լայնությունը- 35-40 սմ *քայլակի ծանրաբեռնվածությունը մինչև- 65կգ *քայլակի քաշը- 6կգ 

Վերին և ստորին վերջույթների պրոթեզների, միո և բիոպրոթեզների , ապարատների վերանորոգում

72-77-րդ չափաբաժնին ներկայացվող ընդհանուր պահանջները	
1.Ստանդարտը	Ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից նախկինում շահառուին տրամադրած պարագաների ընթացիկ վերանորոգում
2. Տեխնիկական ցուցանիշները	Վերանորոգում՝ ըստ վնասված հանգույցների, նախկին պարագաներին չափսերին համապատասխան, պարագայի ծառայողական, ֆունկցիոնալ և կոսմետիկ վերականգնում
3. Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը լինեն չիրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին
4.Պարագայի տրամադրումը	Տրվում է շահառուին փորձարկումից հետո
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
Չափաբաժին 75 Ստորին վերջույթների պրոթեզներ (հասարակ վերանորոգում)	Պարագաները վերանորոգվում են չօգտագործված, տեղական և ԱՊՀ երկրներում արտադրվող նյութերով, վերանորոգման արդյունքում ամբողջովին վերականգնվում են պատրաստման պահին պարագայի ունեցած չափանիշները և հնարավորությունները
Չափաբաժին 76 Ստորին վերջույթների հոդով օրթեզներ	Պարագաները վերանորոգվում են չօգտագործված, տեղական և ԱՊՀ երկրներում արտադրվող նյութերով, վերանորոգման արդյունքում ամբողջովին վերականգնվում են պատրաստման պահին պարագայի ունեցած չափանիշները և հնարավորությունները

Փոքր տրամաչափի և հաշմանդամի սայլակների վերանորոգում

ներկայացվող ընդհանուր պահանջները	
1.Ստանդարտը	Ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից նախկինում շահառուին տրամադրած պարագաների ընթացիկ վերանորոգում
2. Տեխնիկական ցուցանիշները	Գործող նորմերին, սայլակների նախկին չափսերին

3. Անվտանգությունը	Նյութերը չիրդեհվող, թեթև, բավարարեն հիգիենիկ պայմաններին, բավարարեն օրգանիզմի ֆիզիկական վիճակին
4. Գնման պայմանները	Սայլակների վնասվածության բարդությունից ելնելով վերանորոգման ժամկետը տևում է մինչև 3 օր
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
Չափաբաժին 79 Հաշմանդամի սայլակ	Վերանորոգված սայլակը պետք է ունենա պատրաստման պահին ունեցած չափանիշները և հնարավորությունները

Չափաբաժին 80	**Լսողական սարքերի վերանորոգում**
80 չափաբաժնին ներկայացվող ընդհանուր պահանջները	
1.Ստանդարտը	Ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից նախկինում շահառուին տրամադրած պարագաների ընթացիկ վերանորոգում
2. Տեխնիկական ցուցանիշները	Լսողական սարքերի ծառայողական, ֆունկցիոնալ և կոսմետիկ վերականգնում
3. Անվտանգությունը	Նյութերը չիրդեհվող, թեթև, բավարարեն հիգիենիկ պայմաններին, բավարարեն օրգանիզմի ֆիզիկական վիճակին
4. Գնման պայմանները	Վերանորոգման ժամկետը չպետք է գերազանցի 4 օրից
5. Պարագայի տրամադրումը	Վերանորոգված լսողական սարքը փորձարկվում և հանձնվում է շահառուին
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
6.Լսողական սարքերի վերականգնում	Վերանորոգված լսողական սարքը պետք է ունենա պատրաստման պահին ունեցած չափանիշները և հնարավորությունները

Շահառուին տրամադրվող պարագաները և ծառայությունները պետք է լինեն չօգտագործված, նոր նյութերից:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝

6. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար վարել անձնական գործ (ներառյալ՝ հեռախոսահամար)
7. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց

8. Մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատուցումը, մասնավորապես, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների պատրաստման համար չափագրումներն ու չափափորձարկումները կազմակերպել արտագնա այցելությունների միջոցով՝ սահմանամերձ մարզերում առնվազն 2 ամիսը մեկ անգամ,մյուս մարզերում՝ ըստ անհրաժեշտության:

9. Իրենց դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել տեղեկատվություն Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ ***պատվիրատուից ստացած ձևաչափով***:

10. Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ.
6) համապատասխան և մատչելի շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու, արտադրության գործընթացը կազմակերպելու համար.

6. Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը:

Գերմանական <<ՕԹԹՈ-ԲՈՔ>> ֆիրմայի կողմից թողարկվող կամ համարժեք նյութերով և գերմանական տեխնոլոգիայով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների

Ստորև բերված տեխնիկական բնութագրերը կիրառվում են ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում՝ գերմանական <<ՕԹԹՈ-ԲՈՔ>> ֆիրմայի կողմից թողարկվող կամ համարժեք նյութերով և գերմանական տեխնոլոգիայով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և դրանց վերանորոգման ծառայությունների չափաբաժինների նկատմամբ:

Գերմանական <<ՕԹԹՈ-ԲՈՔ>> ֆիրմայի կողմից թողարկվող կամ համարժեք նյութերով և գերմանական տեխնոլոգիայով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների տրամադրման և դրանց վերանորոգման հետ առնչվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ /այսուհետ Որոշում/, իսկ ծառայությունների մատուցումը իրականացվում է համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի հունիսի 27-ի N 92-Ա/1 հրամանով հաստատված կարգի:

Որոշման համաձայն պարագա ստանալու իրավունք ունեցող անձանց /այսուհետ՝ շահառու/ տրամադրվում է՝

ներկայացվող ընդհանուր պահանջներ	
1. Ստանդարտը	Գերմանական <ՕԹԹՈ-ԲՈՔ> ֆիրմայի կամ համարժեք նյութերով թողարկվող և գերմանական տեխնոլոգիայով՝ համապատասխան ISO-ի
2. Տեխնիկական ցուցանիշները	Կոշտ և փափուկ, պոլիմերներից և կտորից, գույնը ըստ շահառուի ցանկության
3. Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործ-վող նյութերը լինեն չիրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին
4. Տեխնիկական ցուցանիշները	Օրթեզավորման, բանդաժներով ապահովման ժամկետը նախատեսվում է 5-10 օր: Այդ ընթացքում շահառուն մինչև 3 անգամ կարող է ներկայանալ կազմակերպություն՝ չափափորձարկման, շահառուին սովորեցվում է պարագայից օգտվելու ձևը:
5. Պարագայի տրամադրումը	Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո
6. Երաշխիքային ժամկետը	Շահագործման ամբողջ ժամանակահատվածը, որի ընթացքում պահանջվող վերանորոգումներն իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
Չափաբաժին 100 Կորսեթ կիսափափուկ	Մեջքի ուղղման և ֆիքսման նպատակով օգտագործվող ճկուն շինաներ
Չափաբաժին 101 Ներդիրներ հարթաթաթության	Հարթաթաթությունն ուղղող, կոշտ և փափուկ կաշվից և խցանե միջնադիրով ներդիրներ
Չափաբաժին 103 Սուպինատոր հարթաթաթության հավասարեցման ներդիրով	Հարթաթաթությունը և ոտքերի անհավասարությունն ուղղող, կոշտ և փափուկ կաշվից, խցանե միջնադիրով ներդիրներ, հավասարեցման նպատակով թեթև ռետինե շերտի օգտագործմամբ
Չափաբաժին 104 Բանդաժներ /աղեկապ/ պախովի	Ճողվածքը ձգող հարմարանք, ռետինե ժապավենով և կոշտ և փափոկ կաշվով, փափուկ ներդիրով

Շահառուին տրամադրվող պարագաները և ծառայությունները պետք է լինեն չօգտագործված, նոր նյութերից:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝

1. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար վարել անձնական գործ (ներառյալ՝ հեռախոսահամար)
2. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը.
3. Մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների

համար չափագրումներն ու չափափորձարկումները կազմակերպել արտագնա այցելությունների միջոցով՝ սահմանամերձ մարզերում առնվազն 2 ամիսը մեկ անգամ,մյուս մարզերում՝ ըստ անհրաժեշտության:

4. Իրենց դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել տեղեկատվություն Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ ***պատվիրատուից ստացած ձևաչափով***:

5. Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ.

6) համապատասխան և մատչելի շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու, արտադրության գործընթացը կազմակերպելու համար.

6. Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	Նախատեսվում է գնել 2017 թ. I եռամսյակ քանակը	I եռամսյակ գինը	II եռամսյակ քանակը	II եռամսյակ գինը	III եռամսյակ քանակը	III եռամսյակ գինը	IV եռամսյակ քանակը	IV եռամսյակ գինը	Ընդամենը քանակը	Ընդամենը գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
3	Արմնկային օրթեզ հոդով, պլաստիկից	հատ	150000	1								**1**	
5	Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, լամինացիայով(AFO)	հատ	100000			1		1				**2**	
9	Սրունք-թաթային օրթեզ հոդով, լամինացիայով(AFO)	հատ	125000	1						1		**2**	
11	Ծնկան հոդի օրթեզ հոդով, լամինացիա-յով (KO)	հատ	170000			1				1		**2**	
12	Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, նաշմիա	հատ	270000	2		3		3		2		**10**	

24	Կրծքա-գոտկա-սրբանային օրթեզ՝ սեղմիրան (TLSO)	հատ	290000	2		2		2		1		**7**	
25	Գոտկա-սրբանային օրթեզ՝ սեղմիրան (LSO)	հատ	150000	2		1		2		2		**7**	
28	Օրթոպեդիկ կոշիկ	զույգ	19500	315		320		315		321		**1271**	
29	Բաշմակ /ոտնաման/	հատ	9900	2		3		2		3		**10**	
56	Սեղմիրան/կորսետ(փափուկ)	հատ	18500	43		44		44		44		**175**	
57	Աղեկապ ԲՆ 1-01	հատ	13000	4		5		5		5		**19**	
58	Աղեկապ ԲՆ1-05	հատ	14000	5		4		4		4		**13**	
59	Աղեկապեր՝ ԲՆ3-08, որովայնի ճողվածքի համար	հատ	12500	15		15		15		15		**60**	
60	Աղեկապեր՝ ԲՆ3-09, որովայնի ճողվածքի համար	հատ	9148.94	12		11		12		12		**47**	
62	Ռեկլինատոր ԿՌ1-01	հատ	4660	1		0		0		0		**1**	
63	Ծնկակալ ՊՆ0-03	հատ	3800	1		2		1		2		**6**	
64	Օրոթոպեդիկ սուպինատոր/ներդիր	զույգ	11000	29		29		29		29		**116**	
65	Հենակ թևատակի	հատ	6700	97		98		97		98		**390**	
66	Հենակ արմնկային	հատ	4500	238		237		238		237		**950**	
67	Ձեռնափայտ	հատ	2800	150		150		150		150		**600**	
68	Քայլակ սովորական	հատ	21000	56		56		56		55		**223**	
	Մանակական												

	ուղեղային կաթված ունեցող երեխաների համար/												
75	Ստորին վերջույթների պրոթեզներ (հասարակ վերանորոգում)	հատ	21714.29	8		9		9		9		**35**	
76	Ստորին վերջույթների հոդով օրթեզներ /վերանորոգում/	հատ	27000	3		2		3		2		**10**	
79	Հաշմանդամի սայլակ /վերանորոգում/	հատ	10000	7		8		7		8		**30**	
80	Լսողական սարքերի վերանորոգում	հատ	7300	20		20		20		20		**80**	
100	Կորսեթ կիսափափուկ	հատ	10900	53		54		54		54		**215**	
101	Ներդիրներ հարթաթաթության	զույգ	6500	175		175		175		175		**700**	
103	Սուպինատոր հարթաթաթության հավասարեցման ներդիրով	զույգ	9500	6		7		7		7		**27**	
104	Բանդաժներ /աղեկապ/ պախովի	հատ	9000	3		4		4		4		**15**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3
Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հ/հ 900011016723 հվհհ 01506515
Աշխատակազմի ղեկավար՝
Գ. Գրիգորյան
.....
Կ.Տ (ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

"Պրոթեզաօրթոպեդիկ" ՍՊԸ
հասցեն՝ ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55ա
Բանկի անվանումը՝ "Հայէկոնոմբանկ' ԲԲԸ Արաբկիրի մասնաճյուղ
հ/հ 163058000791 հվհհ 00851861
տնօրեն Գ. Բաբայան
.....
Կ.Տ (ստորագրություն)

Հավելված 2
« 27 » մարտի 2017 թ. կնքված
N «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-Պ» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 20 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
3,5,9,11,12,24, 25,28,29,56-60, 62-69, 75, 76,79,80, 100, 101, 103, 104	Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայություններ													

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն
հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3
Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
h/h 900011016723 հվհհ 01506515
Աշխատակազմի ղեկավար՝
Ա. Գրիգորյան

Կ.Տ. (ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

"Պրոթեզաօրթոպեդիկ" ՍՊԸ
հասցեն՝ ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55ա
Բանկի անվանումը՝ "Հայէկոնոմբանկ' ԲԲԸ
Արաբկիրի մասնաճյուղ
h/h 163058000791 հվհհ 00851861

Տնօրեն Գ. Բաբայան

.....

Կ.Տ (ստորագրություն)

Հավելված 3
<<____>> _____20 թ. կնքված
N _____ ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների							
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<<____>> _____20 թ. կնքված
N _____ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն